րութիւնների վրայ կանգնած էին Արտաշէս Բ-ի հրաշալի ապարանքները, նրա ամրոցները՝ հզօր աշտարակներով ու պարիսպներով: Իսկ այժմ նրանց տեղում կանգնած է թուրք բէյի անշուք տնակը: Տասնեւութ դար առաջ Արտամեդի բուրաստաններում, իր նաժիշտների նազելի խումբով ճեմում էր Սաթենիկ տիկինը, ալանաց գեղեցկուհին, Արտաշէսի սիրելին: Իսկ այժմ, ծառերի հովանիի ներքոյ թրքուհի խաթունն է իր թուլամորթ ամուսնին փայփայում: Տասնեւութ դար առաջ Աստղկայ հոյակապ տաճարն էր կանգնած բլուրի գագաթի վրայ եւ իր մարմարեայ սիւնազարդ ճակատով նայում էր դէպի լայնածաւալ, կապուտակ ծովը: Հայոց դեռահաս աղջիկները ամէն առաւօտ զարդարում էին սիրոյ դիցուհու տաճարը թարմ ծաղիկներով եւ նրանից բախտ խնդրում:

Ասլանը մի քանի հետաքրքիր հնութիւններ եւս ցոյց տուեց ինձ այստեղ:

Նա ցոյց տուեց մի վիմափոր աղբիւր, որ գտնւում էր հայոց թաղի մօտ, ուղիղ ճանապարհի եզրի վրայ, որը տանում է դէպի Ոստան, Բաղէշ, Մուշ եւ այլն: Մարդու հասակի բարձրութեան չափով եւ բաւական լայն փորուած է ժայռը եւ ներս տարած: Այդ վիմափոր խորութիւնից դուրս է հոսում մի ջրաղաց բանեցնելու չափ մաքուր եւ սառն ջուր: Այդ յորդաբուխ աղբիւրը պահպանել էր մինչեւ այսօր մի աւանդութիւն, որ խիստ բնայայտիչ է Արտամեդի հեգնասէր աղջիկներին, որոնք, սկսեալ Աստղկայ օրերից, պահպանել են ուրախ, մշտածիծաղ բնաւորութիւն եւ սիրող, մշտաբորբոք սիրտ: Տասնեւուեց դար առաջ այդ աղբիւրի մօտով անցնում էր Յակոբ Մծբնայ հայրապետը, Գրիգոր Լուսաւորչի հօր քեռորդին: Նա վերադառնում էր Արարատից, ուր ջերմ փափագով գնացել էր Մասիսի գագաթը բարձրանալու եւ Նոյի տապանը տեսնելու: Նա բարձրացաւ մինչեւ կէսը. այնտեղ մի խորին քուն տիրեց նրան: Աստծոյ հրեշտակը, խնայելով նրա ծերութեանը, տուեց տապանի տախտակներից մէկը, ասելով, որ անհնարին կը լինի նրան մինչեւ գագաթը բարձրանալ: Տապանի այդ փոքրիկ մասը գոհացրեց հայրապետի բաղձանքը, եւ նա մեծ ուրախութեամբ հեռացաւ Արարատից, իր հետ բերելով թանկագին աւանդը: Անցնելով Արտամեդից, նա մօտեցաւ յիշեալ աղբիւրին իր ծարաւը զովացնելու: Արտամեդի կատակասէր աղջիկները այդ միջոցին ջուր էին լցնում աղբիւրից: Տեսնելով ծերունուն, սկսեցին ծաղրել նրան: Հայրապետը անիծեց անպարկեշտներին, եւ բոլորի սեւ ծամերը սպիտակացան: Այն օրից, իբրեւ նշան, Արտամեդի աղջիկների մազերից մի փունջ, հէնց ծնած օրից, մնաց ճերմակ...

Երբ ես եւ Ասլանը մօտեցանք աղբիւրին, հայոց աղջիկները դարձեալ սափորներով ջուր էին տանում այնտեղից: Ես մեծ հետաքրքրութեամբ նա-